

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի  
գիտական խորհրդի 19.05.21թ. կայացած թիվ 12.20-21 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 27-ը:

### **Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

1. Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Վ. Բարխուդարյանի կողմից ներկայացված "Մակրոմոլեկուլների մոլեկուլային բնութագրերը լուծույթներում" բուհական դասագիրքը ֆիզիկայի ֆակուլտետների ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության և դրա տպագրության ներկայացնելու երաշխավորության հարցը:
2. Ֆիզիկայի ֆակուլտետի դոցենտների ընտրություններ:

### **Լսեցին՝**

Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Վ. Բարխուդարյանի կողմից ներկայացված "Մակրոմոլեկուլների մոլեկուլային բնութագրերը լուծույթներում" բուհական դասագիրքը ֆիզիկայի ֆակուլտետների ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության և դրա տպագրության ներկայացնելու երաշխավորության հարցը:

### **Ելույթ ունեցավ՝**

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց վերոհիշյալ դասագրքի վերաբերյալ գրախոսներ օպտիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ. Ալավերդյանի և ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի առաջատար գիտ. աշխատող, քիմ. գիտ. դոկտոր Ս. Գրիգորյանի դրական կարծիքները և Ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը:

### **Որոշեցին՝**

Հաշվի առնելով ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը՝ երաշխավորել մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Վ. Բարխուդարյանի կողմից ներկայացված "Մակրոմոլեկուլների մոլեկուլային բնութագրերը լուծույթներում" բուհական դասագրքի ընդգրկումը ուսումնական գործընթացում և դրա տպագրությունը ԵՊՀ տպարանում:

## Լսեցին՝

Ֆիզիկայի ֆակուլտետի դոցենտների պաշտոնների թեկնածուների քննարկման հարցը:

## Ելույթ ունեցավ՝

Մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Կիրակոսյանը: Նա ներկայացրեց դոցենտների պաշտոնների թեկնածուներ Աննա Ասատրյանի, Լյովա Գրիգորյանի, Տիգրան Հակոբյանի, Գոհար Հովհաննիսյանի և Պետիկ Պետրոսյանի մրցութային հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը և արտահայտեց մրցութային հանձնաժողովի դրական կարծիքը հինգ թեկնածուների վերաբերյալ:

Նախագահ Ռ. Հակոբյանը առաջարկեց անցնել քվեարկության: Նա գիտխորհրդի անդամներին ներկայացրեց քվեարկության կարգը: Փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու նպատակով գիտխորհրդի որոշմամբ կազմվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Արշակ Վարդանյան (նախագահ),
2. Գոռ Չալյան,
3. Ալեքսանդր Հայրապետյան:

Հաշվիչ հանձնաժողովը գիտխորհրդի անդամներին բաժանեց մեկական քվեաթերթիկ: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփեց արդյունքները և կազմեց համապատասխան արձանագրությունները, որից հետո հայտարարվեցին ընտրությունների արդյունքները:

Քվեատուփում առկա էին 27, անվավեր քվեաթերթիկ չկար:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով Ա. Ասատրյանը, Լ. Գրիգորյանը, Տ. Հակոբյանը, Գ. Հովհաննիսյանը և Պ. Պետրոսյանը ընտրվել են Ֆիզիկայի ֆակուլտետի դոցենտների պաշտոններում:

## Որոշեցին

Ա. Ասատրյանը, Լ. Գրիգորյանը, Տ. Հակոբյանը, Գ. Հովհաննիսյանը և Պ. Պետրոսյանը ընտրվել են Ֆիզիկայի ֆակուլտետի դոցենտների պաշտոններում:

Ընտրությունների արդյունքներն ընդունվեցին միաձայն:

Ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Գ. Հ. Հովհաննիսյան